ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Էդմոն Մարուքյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-875-20.10.2015-ՊԻ-010/0) վերաբերյալ:

Օրենքի նախագծի 1-ին հոդվածի համաձայն՝ եթե ինքնաբացարկի մասին դիմում է ներկայացնում պատգամավորի կին թեկնածուն, ապա մանդատը փոխանցվում է կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի հաջորդ կին թեկնածուին: Նշված հոդվածը լրամշակման կարիք ունի, քանի որ իրավական կարգավորում տրված չէ այն դեպքերին, երբ ինքնաբացարկներով պայմանավորված՝ ցուցակում որևէ կին թեկնածու ընդգրկված չի լինում, կամ երբ թափուր մանդատն առաջանալուց հետո ցուցակի

բոլոր կին թեկնածուները ներկայացնում են ինքնաբացարկի մասին դիմում, կամ երբ ցուցակում այլևս կին թեկնածու չկա:

Հարկ է նշել նաև, որ օրենքի նախագծի դրույթները համահունչ չեն ընտրական օրենսգրքի այլ հոդվածների դրույթների հետ, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 108-րդ հոդվածը կարգավորում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուներ առաջադրելու հետ կապված հարաբերությունները, սակայն չի նախատեսում կանանց և տղամարդկանց վերաբերող առանձին դրույթներ:

Օրենքի նախագծի 1-ին հոդվածում «կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի» բառերով:

Օրենքի նախագծի 2-րդ հոդվածում «մանդատը փոխանցող պատգամավորը» արտահայտությունը հստակեցման և խմբագրման կարիք ունի, քանի որ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով պատգամավորներին մանդատ փոխանցելու լիազորություն նախատեսված չէ:

Օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասից անհրաժեշտ է հանել «հետևյալ բովանդակությամբ» բառերը՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջները:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ նախագծով նախատեսված կարգավորումները ամբողջական չեն, առկա են լրամշակման և խմբագրման կարիք ունեցող դրույթներ, և այդ առումով դեմ է ներկայացված նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն:**

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:
2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:
3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) երբ համամասնական ընտրակարգով ընտրված կին պատգամավորը հրաժարվում է մանդատից, ապա նրա մանդատը փոխանցվում է ընտրական ցուցակում ընդգրկված հաջորդ կին թեկնածուին:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային խմբի շուկայի հետ, ուստի Նախագծի ընդունմամբ նշված շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)՝ գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով *առաջարկվում է լիազորությունները վաղաժամկետ դադարեցվելու դեպքում պահպանել համամասնական ընտրակարգով ընտրված կանանց տեղերը այլ կանանց համար* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում:***

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծի վերաբերյալ

Վերոնշյալ օրենքի նախագիծը ընդունվելու դեպքում ՀՀ պետական և համայնքային բյուջեների մուտքերի և ելքերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխմանը չի հանգեցնում:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-875-20.10.2015-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ընտրական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 121-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերությունը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Եթե ինքնաբացարկի մասին դիմում է ներկայացնում պատգամավորի կին թեկնածուն, ապա մանդատը փոխանցվում է կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի հաջորդ կին թեկնածուին:»:

Հոդված 2. Օրենսգրքի 125-րդ հոդվածի 8-րդ մասն 1-ին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած պատգամավորի մանդատը կենտրոնական ընտրական հանձնաժողովի արձանագրությամբ այդ մասին հանձնաժողովին իրազեկելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, տրվում է այդ կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուին, բացառությամբ եթե մանդատը փոխանցող պատգամավորը կին է:»:

Նույն մասն 1-ին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Եթե սույն մասով սահմանված կարգով դադարում են կին պատգամավորի լիազորությունները, ապա մանդատը տրվում է կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի հաջորդ կին թեկնածուին:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հ ի մ ն ա վ ո ր ու մ
«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման

Դեռևս 1953 թվականին ՄԱԿ-ի կողմից ընդունվել է «Կանանց քաղաքական իրավունքների մասին» կոնվենցիան (Հայաստանը միացել է 2007 թվականին, Ն-025-4[1]), որի 3-րդ հոդվածով մասնավորապես հռչակվում է, որ ***կանայք պետք է իրավունք ունենան տղամարդկանց հետ հավասար հիմունքներով զբաղեցնել պետական պաշտոններ և կատարել ազգային օրենսդրությամբ սահմանված պետական գործառույթներ՝ առանց որևէ խտրականության:***
ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1979 թվականին ընդունված «Կանանց նկատմամբ ամեն տեսակի խտրականության վերացման մասին» կոնվենցիային Հայաստանը միացել է դեռևս 1993 թվին (Հ.Ն-0849-I2): Համաձայն դրա 3-րդ հոդվածի՝ ***Կոնվենցիայի անդամ պետությունները բոլոր բնագավառներում և հատկապես քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային ոլորտներում ընդունում են բոլոր համապատասխան միջոցառումները, այդ թվում՝ օրենսդրական, ապահովելու համար կանանց համակողմանի զարգացումն ու առաջընթացը, որպեսզի կանայք տղամարդկանց հետ հավասար հիմքի վրա կարողանան իրագործել մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները:*** Միաժամանակ, ըստ 7-րդ հոդվածի (b) կետի՝ ***Կոնվենցիայի անդամ պետություններն ընդունում են բոլոր անհրաժեշտ միջոցառումները կանանց նկատմամբ պետության հասարակական և քաղաքական կյանքում խտրականության վերացման համար և կանանց համար մասնավորապես ապահովում են տղամարդկանց հետ հավասար հիմքի վրա՝ մասնակցություն կառավարության քաղաքականության ձևավորմանն ու իրականացմանը և քաղաքական պաշտոնների զբաղեցում, ինչպես նաև բոլոր պետական գործառույթների իրականացում պետական կառավարման բոլոր մակարդակներում:***
Հայաստանի Հանրապետության կառավարության գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրի [3] 3-րդ կետի համաձայն՝ ծրագրվել է ***ձեռնարկել հատուկ միջոցներ ապահովելու կանանց 30% ներկայացվածությունն օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների որոշումների ընդունման մակարդակներում՝ նպատակ ունենալով օրենսդիր և գործադիր իշխանությունների որոշումների ընդունման մակարդակում կանանց թերի ներկայացվածության հաղթահարում և սոցիալական համերաշխության ամրապնդում:***
Հայաստանի Հանրապետության 5-րդ գումարման Ազգային ժողովում կին պատգամավորները 13-ն են, ինչը կազմում է խորհրդարանի 9.92%-ը4, մինչդեռ համաձայն Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 108-րդ հոդվածի 2-րդ մասի և 155-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության՝ կուսակցությունների նախընտրական ցուցակներն այնպիսի սկզբունքով են կազմվում, որ կանայք դրանցում առնվազն 20% մասնակցություն ունեն: Այսինքն, պատգամավորի կին թեկնածուների կեսից ավելին մանդատը զիջում է տղամարդկանց՝ ինքնաբացարկի մասին դիմում ներկայացնելու միջոցով, ինչով կանանց մասնակցությունն օրենսդիր իշխանությունում ընթացող քաղաքական գործընթացներին դառնում է ֆորմալ կամ սիմվոլիկ բնույթ կրող երևույթ:
Հայաստանի քաղաքական համակարգի սխալ ձևավորված ավանդույթ է դարձել կին թեկնածուներով կուսակցության ընտրական ցուցակի համալրումը և այնուհետև, կուսակցության խորհրդարան անցնելու պարագայում, կանանց կողմից ինքնաբացարկի դիմում ներկայացնելը և մանդատը հաջորդող համարներում գտնվող պատգամավորի տղամարդ թեկնածուներին փոխանցելը:
Այսպիսով, սույն նախագիծը նպատակ ունի այս արատավոր պրակտիկան օրենքի ուժով արգելելը, ինչպես նաև որպեսզի բոլոր այն դեպքերում, երբ կին պատգամավորն այլ պաշտոն է ստանձնում կամ հրաժարվում է մանդատից պատգամավորական գործունեության իրականացման ընթացքում, կրկին նրա մանդատը փոխանցվի ընտրական ցուցակում ընդգրկված հաջորդ կին թեկնածուին:
Այսինքն, խորհրդարանում կպահպանվի կուսակցության ընտրական ցուցակով ձևավորված՝ կանանց և տղամարդկանց միջև համամասնությունը:
Ներկայացված նախագծի ընդունմամբ հնարավոր կլինի պահպանել համամասնական ընտրակարգով ընտրված կանանց տեղերը կանանց համար:

1.http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=39845)
2 http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=3323
3 http://www.gov.am/u_files/file/kananc-xorh/gender-strategic%20programm%202011-2015.pdf
4 http://www.parliament.am/deputies.php?lang=arm